

ՍԱՂՄՈՍ 54

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Թշնամիներից պաշտպանվելու աղոթք	Հակառակորդներից ազատվելու պատասխանված աղոթք	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք	Թշնամիներից պաշտպանության աղոթք	Աղերս Աստծուն՝ Արդար Դատավորին
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, նկինություն. Դավթի երգը, երբ զիփացիք Սավուդին ասացին. «Ահա Դավիթը մեզ մոտ է թաքնված»				
54:1-3	54:1-3	54:1-2 54:3	54:1-3	54:1-2 54:3
54:4-5	54:4-5	54:4-5	54:4-5	54:4-5
54:6-7	54:6-7	54:6-7	54:6-7	54:6-7

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 54:1-3</p> <p>¹Ո՛վ Աստված, Քո անվամբ ինձ ազատի՛ր Ու Քո զորությամբ արդարացրո՛ւ ինձ:</p> <p>²Ո՛վ Աստված, լսի՛ր իմ աղոթքը, Ակա՛նջ դիր բերանիս խոսքերին:</p> <p>³Քանի որ օտարները վրաս բարձրացան, Ու ճնշողներն իմ անձն են փնտրում, Նրանք Աստծուն իրենց առաջ չեն դնում: Սեյա:</p>

54:1-3 Այս պարբերությունը ցույց է տալիս պատմական միջավայրը որպես անձնական հարձակման տակ գտնվողի, ըստ երևույթին ուխտի այլ մարդկանց կողմից: Ուշադրություն դարձրե՛ք աղոթքի խնդրանքներին՝

1. ազատիր ինձ – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. արդարացրո՛ւ ինձ (այսինքն՝ արդարությամբ դատիր) – BDB 192, KB 220, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆՆԵՐԻ միջև և առաջինին զուգահեռ: Այն գործում է որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ Ուզարտական պոեզիայի օրինակների համաձայն (AB, էջ՝ 24): Արտահայտում է «իրավական դատավճիռ»: Սաղմոսերգուն Աստուծուց հայցում է դատական արդարացում: Նրան անտեղի մեղադրում էին:
3. լսի՛ր իմ աղոթքը – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 17:6
4. ակա՛նջ դիր – BDB 24, KB 27, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ համազոր զուգահեռներ են #3-ի հետ, տես՝ Սաղմ. 5:1, 55:1, 86:7

❖ **«Ո՛վ Աստված»** Սա Աստծո անունն է (*Elohim*), որը նկատի ունի Նրան որպես Արարիչ, պահապան և մատակարար այս մոլորակի վրա ամբողջ կյանքի համար (տես՝ Ծննդոց 1, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ): Այն հանդիպում ենք երկու անգամ այս Սաղմոսում՝ 54:1 և 54:2ա: Այն համազոր է՝

1. Քո անունը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»)
2. Քո գորությունը, տես՝ 2 Մնաց. 20:6:

54:3 Սաղմոսերգուի թշնամիները՝ հակառակորդները բնութագրվում են այս համարում՝

1. օտարներ (BDB 266 I, տես՝ Սաղմ. 44:20, 109:11) բարձրացան վրաս, Սաղմ. 54:3ա: Սա սովորաբար կիրառվում է ուխտի այլ մարդկանց համար:
2. ճնշողներ՝ բռնակալներ (BDB 792): Սա առանձնապես կիրառվում է այլ ազգերից թշնամիների համար (այսինքն՝ նվաճողներ, տես՝ Ես. 13:11, Եզեկ. 28:7, 30:11, 31:12, 32:12):
3. նրանք Աստծուն իրենց առաջ չեն դնում. սա կարող էր վերաբերել՝
ա. անաստված իսրայելացիներին, տես՝ Սաղմ. 14:1, 36:1-4, 53:1
բ. Հեթանոսներին (այսինքն՝ ազգային թշնամիներ)

❖ **«Սեյա»** Տես Սաղմոս 3:2-ի գրառումը և Սաղմոսացի Ներածություն, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 54:4-5

⁴Ահա Աստված է իմ օգնականը,
ՏԵՐԸ իմ հոգու պաշտպանների հետ է:
⁵Նա չարիքով է հատուցելու իմ թշնամիներին,
Քո ճշմարտությամբ կործանի՛ր նրանց:

54:4-5 Ինչպես որ սաղմոսերգուն նկարագրում է իր թշնամիներին Սաղմ. 54:3-ում, այնպես էլ Սաղմ. 54:4-5-ում բնութագրում է Աստծուն և խնդրում Նրան, որ գործի իր թշնամիների դեմ:

1. Աստված իմ օգնականն է – BDB 740, KB 810, *Qal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 27:9, 30:10, 37:40, 118:7
2. Տերը (*Adon*, BDB 10) իմ հոգու պահապանն է (BDB 701, KB 759, *Qal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 37:17, 24, 41:12, 51:12, 71:6, 145:14)
3. Նա հատուցել է (բառացի՝ վերադարձնելու է, BDB 996, KB 1427): MT տալիս է *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով, սակայն Սագորեթիկ գիտնականները առաջարկում էին, որ այն ընթերցվի (*Qere*) որպես *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով:
4. Սաղմոսերգուն խնդրում է Աստծուն կործանել (բառացի՝ «լուծել»), BDB 856, KB 1035, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 143:12) իր թշնամիներին, քանի որ նրանք փորձում էին լուծել իրեն, տես՝ Սաղմ. 69:4, 73:27, 94:23, 101:5,8:



NASB, NRSV «Քո հավատարմության մեջ»
NKJV, LXX «Քո ճշմարտության մեջ»
TEV «քանի որ նա հավատարիմ է»
NJB «քո հարատևության մեջ»
JPSOA «Քո հավատարմությամբ»
REB «հավատարմությունդ ցույց տուր»

MT տալիս է «հավատարմություն» (BDB 54, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ՈՒՄ): Կարծես թե այստեղ սաղմոսերգուն վերադառնում է Սաղմ. 54:4-ում Աստծո մասին պնդումները հաստատելու:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 54:6-7

6 Իմ հոժար կամքով պատարագ եմ մատուցելու Քեզ,
Ո՛վ ՏԵՐ, Քո անունն եմ գովելու, քանի որ բարի է:
7 Քանի որ Դու բոլոր նեղություններից փրկում ես ինձ.
Ու այքս ուրախությամբ նայում է իմ թշնամիների վրա:

54:6 Այս փակման պարբերությունը (Սաղմ. 54:6-7) արտահայտում է սաղմոսերգուի վստահությունը, որ Աստված (ՅԱՀԵՆ, Սաղմ. 54:6) գործելու է իր համար: Երբ Նա գործի, սաղմոսերգուն էլ իր հերթին կանի իր բաժինը:

1. պատարագ եմ մատուցելու Քեզ – BDB 256, KB 261, *Qal* ԸՂԶԱԿԱՆ
2. Քո անունն եմ գովելու – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով. կա՛մ «անունն» է բարի, կա՛մ է՛լ ՅԱՀՎԵԻՑ գոհանալը, տես՝ Սաղմ. 92:1:

Սաղմոս 54:6 ունի Իսրայելի Աստծո ուխտի անվան՝ ՅԱՀՎԵԻ հազվադեպ կիրառություն, Սաղմոսների Գիրք 2-ում:



NASB «հոժարակամ»
NKJV, REB «ազատ»
NRSV «հոժար պատարագ»
TEV, NJB «ուրախությամբ»
JPSOA «հոժարակամ զոհաբերություն»

MT տալիս է ՆԱԽԴԻԻ և ԳՈՅԱԿԱՆ (BDB 621): Այն կարող է նկատի ունենալ՝

1. հոժարակամություն
2. ազատ կամքով զոհ

Այստեղ համապատասխանում է առաջինը:

54:7 «Նա» MT տալ է «դա», որը կարող է կապված լինել «Քո անունը» խոսքի հետ՝ Սաղմ. 54:6-ում (տես՝ JPSOA):

Սաղմոսերգուն ոչ միայն «ազատվեց» (BDB 664, KB 717, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ), այլ «տեսավ» (BDB 906, KB 1157, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) իր թշնամիների պարտությունը (տես՝ Սաղմ. 59:10, 92:11, 112:8, 118:7, սա արտահայտում է նույն իմաստը, ինչ Սաղմ. 52:6-ում «նրա վրա ծիծաղելը»):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է նշանակում «արդարացնել» բառը:
2. Ովքե՞ր են Սաղմ. 54:3 և 5-ում նշված թշնամիները:
3. Բացատրե՛ք «անուն» բառի կարևորությունը (Սաղմ. 54:1,6):